№ 85 Մայիսի 22 (Յունիսի 3) 1880 Մայիսի 22 (Յունիսի 3) № 85

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն չէզո
ով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զը գիտենք շահվել։—Ներքին տեսութիւն։ Նամակ Աէքսանդրապոլից։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Խենթը։

## ՉԸ ԳԻՏԵՆՔ ՇԱՀՎԵԼ

Ասիական ոչ մի ազգութիւն չէ կարող համեմատվել հայերի հետ մի յատկութեան կողմից։ Որտեղ հայը ապրում է, նա մօտ է և մատչելի է ամեն հարևան ազգութեան, ամեն ազգութիւնն էլ իրան մատչելի է, իր կեանքով, իր բարք ու վարքով, իր լեզուով։

Այդ բաւական չէ. շատ անգամ հայը ապրելով խառն կերպով այս ինչ ազգութեան հետ, դերազանցում է նրանից՝ նրա պատմութիւնը, նրա լեզուն ճանաչելու մէջ...

Հայը ապրում է չէրկէզների մէջ,—նա չէրկէզի լեզուն չէրկէզից պակաս չը գիտէ, գուցէ և աւելի լաւ։ Հայը ապրում է վրացիների մէջ,—նա ընծայում է վրաց ազգին ժողովրդական գրողներ, բանաստեղծներ, թատերագրողներ, հայը մշակում է վրաց քերականութիւնը և այն։ Հայը ապրում է քուրդերի մէջ,—նա ձեռնարկում է քուրդ լեզուի քերականութիւնը յօրինելու և այն....

Կովկասում, Անդրկովկասում, Հայաստանում և Փոքր-Ասիայում դուք կը գտնէք հայեր ամեն տեղ, ամեն ազգութեան, ամեն ցեղերի մէջ բնակվելիս։ Հայը բնակվում է վրացիների, օսերի, քուրդերի, թուրքերի, չէրկեզների, լազերի, ասորիների, ուտիացիների, աւարցիների, պարսիկների մէջ... Եւ ամեն տեղ նա ուսումնասիրել է իրան շրջապատող ազգաբնակութեան բարք ու վարքը, նրա լեզուն, նրա երգերը, նրա ժողովրդական աւանդութիւնները և այն։

Բայց այնու ամենայնիւ հայը չը գիտէ շահվել իր դրութենից։ Մենք չենք կամենում խօսել որ և իցէ հասարակական, ազգային նպատակով շահվելու մասին, որովհետև հայը իր բոլոր լաւ յատկութիւնների հետ միասին ունի և մի անպիտան յատկութիւն, այն է որ պատրաստ է ամեն ազգութեան ծառայել, օգտաւէտ լինել, բայց չէ աշխատում որ իր ազգը դրանից շահ ունենայ... Մենք կամենում ենք խօսել այն շահի վրա, որ հայը, եթէ ուզենար, կարող էր քաղել իր դրութենից, իր ընդունակութիւններից, իր յատկութիւնից՝ ընդհանուր մարդկային գիտութեան համար։

Եկող տարին լինելու է Թիֆլիսում հնագիտական ժողով։ Այդ ժողովի մէջ հայերը, եթէ կամենային, կարող էին ոչ թէ միայն իրանց սեփական ազգային, հնագիտութեան, լեզուագիտութեան ու պատմական գիտութեան ներկայացուցիչներ լինել, բայց կարող էին արժանաւոր կերպով ներկայացնել ուսումնական ժողովի մէջ իրանց հմտութիւնները և բոլոր միւս ասիական, փոքր թէ մեծ ազգութիւնների անցեալի ու ներկայի մասին, որոնց հետ միասին նրանք խառն կերպով ապրում են։

Մենք անձամբ ճանաչում ենք հինգ վեց հայերին, որոնցից մինը գուցէ շատ վրացիներից լաւ գիտէ վրացերէն լեզուն, երկրորդը չէրկէզներից լաւ ուսումնասիրել է չէրկէզների լեզուն, կազմել է այդ լեզուի քերականութիւնը և բառարանը, երրորդը ուտիացիներից պակաս չը գիտէ ուտիերէն լեզուն, նրա երգերը, նրա ժողովրդական աւանդութիւնները և այն։ Բայց այնու ամենայնիւ հայը չը գիտէ շահվել իր դրութենից։ Մենք չենք կամենում խօսել որ և իցէ հասարակական, ազգային նպատակով շահվելու մասին, որովհետև հայը իր բոլոր լաւ յատկութիւնների հետ միասին ունի և մի անպիտան յատկութիւն, այն է որ պատրաստ է ամեն ազգութեան ծառայել, օգտաւէտ լինել, բայց չէ աշխատում որ իր ազգը դրանից շահ ունենայ... Մենք կամենում ենք խօսել այն շահի վրա, որ հայը, եթէ ուզենար, կարող էր քաղել իր դրութենից, իր ընդունակութիւններից, իր յատկութիւնից՝ ընդհանուր մարդկային գիտութեան համար։

Եկող տարին լինելու է Թիֆ-

## ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋ ԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Լ.Թ.

Յովհաննէս հայր սուրբի կացարանը գտնվում էր Ղազարապատի վերին յարկի սենեակներից մէկի մէջ։ Վարդանը իր ամբողջ մարմնի մէջ մի ցուրտ դող զգաց, երբ միւսանգամ ոտք կոխեց վանքի չեմքի վրա։ Տասն տարուց աւել կը լինէր, որ նա հեռացել էր այստեղից։ Այժմ տխուր հանգամանքները կրկին բերեցին նրան այստեղ։ Ի՞նչու աշխարհից անջատված, և իրանց անձը աղօթքի և ճգնութեան նուիրած հասարակութեան այդ մենարանը այնպէս անախորժ տպաւորութիւն գործեց անբախտ երիտասարդի վրա։ Նա յիշեց իր մանկութիւնը, այն յիմարութիւններով լի և դատարկ մանկութիւնը, որ անցուցել էր այնտեղ։ Նա յիշեց այն մթին անցեալը, որի վրա կրկին նայելը զզուանք և սոսկում էր ազդում նրա մէջ։

Վարդանի ակամայ խռովութիւնը չէր կարող չը նշմարել Յովհաննէս հայր սուրբը, նա կարեկցաբար հարցրեց.

—Ի՞նչ կայ, ինչու այսպէս լուռ ես։

—Ոչինչ, երբեմն ինձ հետ պատահում են անտեղի մտայուզութիւններ....

Փոքրիկ սենեակի մէջ կար մի մահճակալ, որի վրա նստած էին հայր սուրբը իր հիւրի հետ. միւս կողմում դրած էր մի սեղան հասարակ փայտից, որի վրա վառվում էր ճրագուի մոմը. իսկ նրա մօտ փոքրիկ սամովարը եփ էր գալիս։ Հայր սուրբը իր ձեռքով ածեց երկու բաժակ թէյ, մէկը տուեց Վարդանին, միւսը սկսեց ինքը խմել։ Տաք ըմպելին կազդուրեց երիտասարդի դրգռված ջղերը։

Երկար երկու կողմից ոչ տիրում էր մի տաղտկալի լռութիւն։ Խօսակցութիւնը չէր պատրաստվում, մինչև նա դարձաւ այն առարկային, որ երկուսի սրտին ոչ խիստ մօտ էր։

—Այստեղ ինչպէս են նայում «գործի» վրա, հարցրեց Վարդանը։

—Մի կարճ պատմութիւնից դուս կարող ես հասկանալ բոլորը, պատասխանեց հայր սուրբը։—Այստեղ եկած էր մի տաճկաստանցի վարդապետ եպիսկոպոս ձեռնադրվելու համար (նա դեռ այստեղ է, գուցէ կը հանդիպես նրան)։ Առաջին օրերում, երբ դեռ նոր էր եկել, խօսելով Թիւրքիայի հայերի մասին, ամենասարսափելի գոյներով նկարագրում էր նրանց դրութիւնը. պատմում էր քրդերի բարբարոսութիւնները, պատմում էր թուրքերի հարստահարութիւնները, և հազարումէկ փաստեր էր բերում, թէ որպիսի եղեռնագործութիւններ են կատարվում Հայաստանում։ Նրա խօսքերին անկարելի էր հաւատ չընծայել, որովհետև բոլորը, ինչ որ ասում էր, հաստատում էր անհերքելի ապացոյցներով։ Բայց հէնց որ այդ մարդը տեսնվեցաւ «հոսոսներիս» հետ, այնուհետև լեզուն փոխեց։ Այնուհետև սկսեց գովաբանել թուրքերի մարդասիրութիւնը, պաշտպանել նրանց արդարութիւնը և հիանալ նրանց ազնուութեան ու մեծահոգութեան վրա։ Ի՞նչ անէր խեղճը, եթէ լեզուն չը փոխէր, եթէ իր խղճի և համոզմունքի դէմ չը ջատագովէր այն, որ իր համար զարշելի էր և ատելի,—գուցէ չէր ստանայ ցանկացած եպիսկոպոսութիւնը։ Մի ուրիշ օրինակ ևս. մի այլ տաճկաստանցի վարդապետ, որի վանքը կողոպտված էր քրդերից, եկել էր այստեղ պաշտպանութիւն խնդրելու։ Այդ ողորմելին աւելի ցաւալի կերպով նկարագրում էր իր ժողովրդի կրած նեղութիւնները թէ կառավարութեան պաշտոնեաներից և թէ քուրդ դէրեբէյլիներից։ Երբ նրա խօսքերը հասան «հոսոսներին», ոչ միայն ուշադրութիւն չը դարձրին վարդապետի խնդիրքի վրա, որի համար նա եկած էր, այլ հրամայեցին դուրս անել վանքից։ Թշուառականը ստիպվեցաւ նոյնպէս փոխել իր լեզուն, և այնուհետև պատուաւոր ընդունելութիւն գտաւ, — մոռացաւ իր վանքը, մոռացաւ իր ժողովուրդը և միւսանգամ չը յիշեց քրդերից կրած հարստահարութիւնները։ Ես աւելին կասեմ, այդ վարդապետը աւելի ևս հաճոյանալու համար, մի տօնախմբութեան օրում, սկսեց խմել սուլթանի կենացը, նոյն իսկ ժամանակ, երբ Բայազէդում և Ալաշկերտի մէջ թուրքերը կոտորում էին հայերին։ —Այդ բոլորից յետոյ, կարծեմ, շատ պարզ է, թէ այստեղ որպէս են նայում «գործի» վրա։

Վարդանը չէր հաւատում իր ականջներին, նրան թւում էր, թէ այդ բոլորը լսում է երազի մէջ։ Նա երևակայել չէր կարող այս ատիճան անգթութիւն, որ հասնում էր սարսափելի դաւաճանութեան։ Ազգի սոսկալի ճգնաժամի րոպէում, երբ նրա կեանքը, երբ նրա ապագան կախված էր մի մազից, որ կարող էր կտրվել, և ձգել նրան յաւիտենական անդունդի մէջ,—մի այսպիսի աղէտալի րոպէում, երբ ամբողջ ազգի աչքը դարձրած էր դէպի փրկութեան Արարատը,—նա, ազգը, հանդիպում էր իր ծնողի սառնասրտութեանը, և զբաղում էր նրան թեքված իր թշնամու, իր սպանողի կողմը...

—Բոլորը մի և նոյն համոզմունքի են, հարցրեց Վարդանը խռովեալ ձայնով։

—Ոչ, «հոսոսները» միայն։ Դրանք թուրքի կառավարութեան մէջ տեսնում են ամեն ինչ արդար և իրաւացի։ Եւ եթէ հայերը բողոքում են, կամ դժգոհութիւններ են յայտնում,—բոլորը սուտ է և զրպարտութիւն։

—Շատ հասկանալի է, դրանք ևս մի տեսակ Թոմաս էֆէնդիներ են. թուրքի անկարգութիւնները միշտ նպաստաւոր են Թոմաս էֆէնդիներին։ Բայց գտնէ թող օրինակ առնէին Ներսէս պատրիարքից, Խրիմեանից և Նարբէից, որոնք հայոց պատմութեան մէջ պաշտելի անուն պիտի թողնեն։

—Դու խիստ միամտաբար ես խօսում, բարեկամ, պատասխանեց հայր սուրբը,—հաւատացնում եմ քեզ, եթէ հնար ունենան, հէնց այսօր կոչնչացնեն Ներսէսի բոլոր գործողութիւնները, և գուցէ աշխատում էլ են...։—Այստեղ ճգնում են հաւատացնել, թէ Ներսէսը և իր արբանեակները, բոլորը չարլատաններ են, թէ նրանք խաբում են ազգին, թէ նրանք հայի համար չեն մտածում (և մտածելու էլ առիթ չը կայ), թէ նրանք եւրոպական այլ և այլ պետութիւնների ներկայացուցիչների ձեռքում անարդ գործիքներ են, որ աշխատում են նրանց քաղաքական շահերի համար, որպէս զի, խեղճ Թիւրքիայի վրին աւելի մեղքեր փաթաթեն։ Այստեղ ծիծաղում են հայերի թեթևամտութեան վրա, որոնք Ներսէսի «ձեռնածութիւններից» մի լաւ բան են սպասում։ Այստեղ ասում են, թէ Թուրքից մի նոր բան պահանջելը կատարեալ լրբութիւն կը լինէր հայերի կողմից, թէ թուրքը տուել է հայ ժողովուրդին ինչ որ պէտք է, որից աւելին նա արժանի չէ։ Եւ եթէ մի բան թերի է մնացել, ասում են, թուրքը այնքան բարի է, որ ինքը կը բարեհաճի նորոգել,—էլ ինչ հարկ կայ ձանձրացնել ողորմած կառավարութեանը։

—Մթէ ամբողջ միաբանութիւնը այդ սոսկալի տրամադրութեան մէջ է գտնվում, գոչեց երիտասարդը բարկութեամբ։

Հայր սուրբը իսկոյն չը պատասխանեց, սենեակից դուրս եկաւ, նայեց դրսի խաւարի մէջ, և ներս մտնելով, նստեց իր առաջվայ տեղը, և բաւական մեղմ ձայնով ասաց.

—Մենք բաւական անզգոյշ ենք խօսում, այստեղ պատերն էլ ականջ ունեն, վանքի հիւրընկալը կենում է հարևան սենեակում, սատանայի հոտառութիւն ունի, եթէ մի բան լսեց, առաւօտեան խարարը կը տանէ...

—Ես հարցրի առհասարակ միաբանութեան տրամադրութիւնը, կրկնեց Վարդանը, առանց ուշադրութիւն դարձնելու հայր սուրբի վերջին խօսքերի վրա։

—«Հոսոսներիս» միայն բացառութիւն են կազմում, թէ չէ, ամբողջ միաբանութիւնը թուրքամոլ չէ։ Նրանց մէջ կան ազնիւ մարդիկ ազնիւ ցանկութիւններով, և գուցէ պատրաստ կը լինեն ամեն զոհաբերութիւն յանձն առնել Թիւրքիայի հայի արտասուքը սրբելու համար, եթէ...

—Եթէ «հոսոսները» թոյլ կը տան։

—Այո։ Ի՞նչ անեն խեղճերը, նրանք այն ատիճան կաշկանդված են, որ խօսելու անգամ իրաւունք չունեն, ուր մնաց գործելու։ Այստեղ կայ մի Մանկունի, մի կատարեալ հրէշ, որ իր ծանրութեան ներքոյ ճնշում է, խեղդում է բոլորին։

—Ես դարձեալ չեմ հասկանում, այս ինչ դժոխային քաղաքականութիւն է՝ տեսնել մի ամբողջ ժողովուրդ Թիւրքիայի բռնակալութեան ներքոյ ճնշված, որ մօտ է ոչնչանալու,—և դարձեալ պաշտպանել ոչնչացնողին։

—Ինձ համար էլ կատարեալ հանելուկ է այդ, ես էլ չեմ հասկանում, պատասխանեց հայր սուրբը չուարած կերպով։

—Բայց ինչով են բացատրում ալաշկերտցոց դաղթականութիւնը կամ Բայազէդի հայերի կոտո-

զուն, չորրորդը, քուրդերի մէջ ապրելով, մշակել է քուրդ լեզուի քերականութիւնը և այլն....

Եկող հնագիտական ժողովում, հայերը, եթէ կամենային, կարող էին եւրոպական գիտնականների համար ամենալաւ միջնորդներ դառնալ ոչ թէ միայն իրանց սեփական, ազգային հնութիւնները ու լեզուն ուսումնասիրելու համար, բայց և կարող էին միջոց տալ Կովկասի, Ընդրկովկասի, Հայաստանի և Փոքր-Ասիայի բոլոր միւս ազգութիւնների հնութիւնները, լեզուն և աւանդութիւնները ամենաճիշդ կերպով ուսումնասիրելու։

Հայերը, եթէ կամենային, կարող էին եկող հնագիտական ժողովում բոլոր տեղական ազգութիւններից ամենաառաջին դեր խաղալ, կարող էին իրանց հմտութիւններով և աշխատութիւններով նսեմացնել բոլոր միւս ասիական ազգութիւնները, նոյն իսկ այդ ազգութիւններին ահագին ծառայութիւններ մատուցանելով։

Բայց դժբաղդաբար, հայերը երբէք չը գիտեն շահվել իրանց դիրքից, իրանց ամենագովելի արժանաւորութիւններից։

Գ. Ա.

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

19 ապրիլի

Չը նայելով Ալէքսանդրապօլի հասարակութեան պատերազմի առթիւ հարստանալուն, անցեալ և այս տարի հացի և առհասարակ պաշարեղէնների թանգութեան առթիւ նոյն հասարակութեան մեծամասնութիւնը ոչ միայն զրկվեցաւ իր հարստութիւնից, այլ և այս իսկ բօպէիս մեծ նեղութեան մէջ է գտնվում։ Իր կրած նեղութիւնը ճըշմարիտ մեծ է, բայց մեր տաճկաբնակ հայրենակիցների աղէխորով ձայնը ոչ պակաս շարժեց նոցա զգայուն սիրտը և նոքա աշխատեցին սնպատճառ իրանց լուման ձգել յօգուտ սովալուկների նշանակված գանձանակի մէջ։ Եթէ 'ի նկատի առնվի, ոչ միայն ձեզ ուղարկված գումարները, այլ և տ. Բաբայեանցի ցուցակով հաւաքածները և այժմ իմ ուղարկած չորս հարիւր տասն և ինն րուբլի քսան և մի կոպէկը (419 ր. 21 կ.) մինչ ապրիլի 19-ին հաւաքած բոլոր փողերի գումարը Ալէքսանդրապօլում հանում է մօտ 1200 ր.։ Նուիրատուների մի մասն էլ կազմում են Արղութեան և Սահականուշեան օրիորդաց ուսումնարանների աշակերտուհիք և վիճակային դպրոցի սաները, որոնց փափուկ սրտերը նոյնպէս անկարեկից չուզեցին մնալ իրանց սիրելի, բայց թշուառ հայրենակից մանուկների դրութեանը։ Ուսումնարաններում եղած հանգանակութիւնները եղած են բոլորովին աշակերտների և աշակերտուհեաց իրանց ինիցիատիվով։ Ցուսամ որ բոլորի ազգանունները ձեր պատուական լրագրի մէջ զետեղելու կը բարեհաճէք 'ի նոր քաջալերութիւն ի րանց և նմաններին։

Աբիսողոմ Յովհաննիսեանց

## ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

30-ին ապրիլի

Ամսոյս 9-ին տեղւոյս գեղարուեստասիրաց կըլուբում մի քանի հայազգի երիտասարդների աշխատութեամբ տրվեցաւ մի թատերական ներկայացում յօգուտ Վանայ հայազգի սովատանջների։ Ներկայացումն էր ռուսերէն և խաղում էին ռուս սիրողներ, միայն մի հայ երիտասարդ, Մ. Թամամշեան մասնակցում էր ներկայացմանը։ Թատրոնախաղից առաջ եղաւ դիվերտիսմենտ, որուն սիրով յօժարեցան մասնակցել, ի հարկէ ձրիաբար, Կայսերական թատրոնաց առաջին դերասանուհի տ. Մ. Սավինան, մի քանի ոտանաւորներ կարդալով, ռուսաց օպերայի երգչուհի օր. Բիչուրինան, դերասան և ժողովրդի կեանքից պատմող պ. Գորբունովը և այլք. իսկ ներկայացումից յետոյ եղաւ պարահանդէս, որը տևեց մինչև գիշերվայ 4 ժամը։ Աֆիշների ծախսելը կլուբի դահլիճում սիրով յանձն առաւ օր. Հեղինէ Յովհաննիսեանը։

Չը նայելով, որ ժամանակը շատ կարճ էր և մանաւանդ մեր ուսանողները գրեթէ ամենքը ըզբաղված էին իրանց քննութիւններով, այնպէս որ տոմսակներ բաժանողների թիւը շատ քիչ էր, այնու ամենայնիւ կլուբի դահլիճը գրեթէ լիքն էր հայ, ռուս և վրացի ժողովրդով, որով և եկամուտը համեմատաբար բաւական մեծ էր։ Աւելորդ չի լինի այստեղ բերել թէ այդ ներկայացման հաշիւը և թէ ինչ կերպով արդիւնքի գործ ածելը։ Եկամուտ. Տոմսակներ ծախելուց 996 ր., աֆիշներ ծախելուց 104 ր., նուիրատուութիւններ 239 ր., ընդամենը 1339 ր.։ Ծախք. Դահլիճի, մուզիքայի, չորերի, տոմսակներ և աֆիշներ տպելու, մի քանի դերասաններ վարձելու և ուրիշ մանր ծախքեր 398 ր.։

Զուտ արդիւնքն է 941 ռբլ. որը ամսոյս 19-ին մեծապատիւ պ. Մկրտիչ Սանասարեանը հեռագրով ուղարկեց Վան ռուսաց հիւպատոս պ. Կամսարականի անունով. այսպէսով յոյս ունենք, որ մեր սովալուկ եղբայրներից ոմանք Զատկի տօնի օրը կը ստանան եթէ ոչ կարմիր ձու կամ զանազան անուշահամ քաղցրաւենիք, գոնէ մի մի կտոր հաց։ Պարտք ենք համարում մատուցանել մեր շնորհակալութիւնը մայրաքաղաքիս հայ հասարակութեանը և մանաւանդ հայ ուսանողներին, որոնք մեծ համակրութիւն և կարեկցութիւն են ցոյց տալի դէպի իրանց սովատանջ թշուառ եղբայրները։ Ձեզ լաւ յայտնի է, յարգոյ խմբագիր, որ Պետերբուրգի ուսանողները եղան գրեթէ առաջին բարի օրինակը խեղճ սովատանջներին օգնելու, երբ իրանց չքաւոր ընկերների համար տրված թատրոնական գումարից 200 ր. խմբագրութեանդ միջնորդութեամբ ուղարկեցին «Արարատ»։—Ի՞նչով են բացատրում Վանի հրդեհը։

—Թուրքին արդարացնելու համար նրանք միշտ պատրաստի և սերտած բառեր ունեն իրանց բերնում։ Մեղքը գցում են հայերի վրա, ասելով, թէ հայերը մի անհանդիստ, դժգոհ և անշնորհակալ ժողովուրդ են։ Ասում են, «գայլը մեղաւոր չէ, երբ գառը նրան բարկացնում է»։ Եւ ալաշկերտցոց գաղթականութեան մէջ տեսնում են՝ ոչ թէ թուրքի և քրդի սուրը և հուրը, որ ստիպեցին մի ամբողջ ժողովրդի թողնել իր հայրենիքը,—այլ աշխատում են ցոյց տալ մի գաղտնի և զօրեղ ձեռք, որ դուրս քաշեց թշուառ ժողովրդին իր հայրենիքից։ Թէ որքան սխալ է այդ, քեզ աւելի պէտք է հասկանալի լինի, Վարդան, դու խօ սկզբից մինչև վերջը «գործի» միջումն ես եղել...

—Այս բոլորից յետոյ, ինձ դարձեալ անհասկանալի է, թէ դու ինչ յոյսերով ես այստեղ մնում, հայր սուրբ,—ասա, խնդրեմ, ինչ պաշտպանութիւն կամ ինչ օգնութիւն կարելի է գտնել դրանցից։

—Ոչինչ, ես ինքս էլ համոզված եմ—ոչինչ։ Բայց ինչ ճար ունեմ, ուրը զիմեմ, ուր գնամ, մնացել եմ չուարած։

—Դիմեցէք հայ հասարակութեանը։

Հայր սուրբը ոչինչ չը պատասխանեց և բօպէական մտածութիւնից յետոյ ասաց, կարծես, ինքն իր հետ խօսելով.

—Այժմ դժուար է բոլորը պարզել... բայց կը գայ մի օր, երբ ժամանակը կը մերկացնէ խայտառակ իրականութիւնը....

Կարծես, արիւնի հետ դուրս ըղխեցան այդ խօսքերը անբախտ աբեղայի սրտից։ Նա այն աստիճան յուսահատված էր, այն աստիճան զայրացած էր, որ իրան զսպել չը կարողացաւ։ Եւ ինչ հարկ կար Վարդանի մօտ ծածկամիտ լինել։ Վարդանը օտար մարդ չէր նրա համար։ Վարդանի հետ նա գործել էր. Վարդանի հետ շատ խորհուրդների մէջ մասնակից էր եղել։

Խօսակցութիւնը կրկին դարձաւ գաղթականների վրա։ Ալաշկերտցոց առաջնորդը պատմում էր իր վտարանդի ժողովրդի թշուառութիւնները, նկարագրում իր, թէ որպիսի տառապանքներ են կրում նրանք, առաջարկում էր միջոցներ, որոցմով կարելի կը լինէր պահպանել նրանց կատարելապէս ոչնչանալուց։

—Ինձ շատ զարմացնում է, որ այդքան անհանգիստ չեն թուում հիւանդներ կան գաղթականների մէջ, կտրեց երիտասարդը հայր սուրբի խօսքը,— այդ հաչուով կէսից աւելին հիւանդ է։ Ը՞նչից առաջ եկաւ այդ։

—Եթէ դու լսելու լինես գաղթականութեան սարսափելի մանրամասնութիւնները, կը զարմանաս, որ այդ թշուառները դեռ ևս կարողացել են կենդանի մնալ։ Դա մի հրաշք է, կատարեալ հրաշք։ Բայց ինձ մօտ ոչ այնքան յիշողութիւն է մնացել և ոչ այնքան լեզուի զօրութիւն, որ կարողանամ բոլորը պատմել քեզ։ Ես միայն կը տամ մի քանի մասնաւոր տեղեկութիւններ։

—Բայազէդի պաշարումից յետոյ, որի մանրամասնութիւնները քեզ յայտնի են, գեներալ Տէր-Ղուկասովն ստիպվեցաւ յետ քաշել ռուսաց զօրքերը։ Այդ միջոցին նա կատարեց երկու մեծ քաջագործութիւններ։ Մի կողմից իր փոքրաթիւ գունդերով նա պէտք է պատերազմէր թուրքերի բազմաթիւ զօրքերի հետ (ի հարկէ, նահանջման դիրք բռնելով), միւս կողմից, նա պէտք է աղատէր Ալաշկերտի և Բայազէդի գաւառների հայ բնակիչներին թուրքերի կոտորածից։ Այդ երկուսն էլ ռազմագիտական մեծ ճարպիկութիւնների կարօտ էին, որոնց մէջ զեներալը ցոյց տուեց իր հանճարը։ Նա այնքան ժամանակ կարողացաւ բռնել թուրք զօրքերի սարսափելի հոսանքի առաջը, որ մինչև նրանց հասնելը, հայերը շտապեցին գաղթել։ Բայց ժամանակը խիստ նեղ էր և ժողովուրդը բոլորովին անպատրաստ էր գաղթականութեան համար։ Ցանկարծ լուր տուեցին, թէ ռուսաց զօրքերը պէտք է թողնեն այդ երկիրը, գաղթեցէք, փախէք այդ երկրից, եթէ մնալու լինէք, թուրքերը կը կոտորեն ձեզ։ Այդ լուրը կայծակի արագութեամբ անցաւ բոլոր գաւառների մէջ։ Սարսափը և տագնապը տիրեցին ժողովրդին։ Թշնամին կանգնած էր նրա դէմին։ Այլ ևս յեղգալ կամ յապաղել անկարելի էր. պէտք էր թողնել սիրելի հայրենիքը։ Ինձ դժուար է նկարագրել այն սոսկալի գիշերը, երբ ժողովուրդը բաժանվում էր իր մնային օջախից։ Մի զարհուրելի խառվութիւն, մի աղէտալի իրարանցում տիրել էր ամբոխի վրա։ Մի գիշերվայ ընթացքում պէտք է գաղթէին։ Անասունների մեծ մասը մնացին դաշտումը, տէրերը ժամանակ չունեցան բերելու։ Հայրը չը սպասեց որդուն, որը տեսան ընկերութեան յօգուտ սովելոց այս տարուայ յունվար ամսին, այսինքն այն ժամանակ, երբ սովի այժը դեռ այնքան զօրաւոր չէր և շատերին անյայտ։ Վերջին ներկայացմանն էլ ուսանողներից շատերը ներկայ էին, չը նայելով ոչ ժամանակի անյարմարութեանը նոցա համար քննութիւնների պատճառաւ և ոչ տոմսակների բարձր գներին (2 ր. պակաս տոմսակ չը կար). բացի դորանից տեղոյս արժանապատիւ Հ. Խանթարճեանը վեհափառ կաթողիկոսի հրամանաւ ստորագրութիւն է բացարել նոյնպէս յօգուտ սովելոց, և ինչ էք կարծում, համարեա թէ մի ուսանող չը մնաց, որ ըստ չափու իր կարողութեան չը մասնակցէր այդ բարի գործին։ Ամեն աղքատ ուսանող, որը հազիւ կարողանում 'է կոպէկանոց դասերով իր գլուխը պահել, չը խնայեց իր լուման։ Արժանապատիւ հօր ժողված 1000 ր. ուղարկված է Վան նոյնպէս մեծ պ. Սանասարեանի ձեռով. այսպէսով Պետերբուրգի հայ հասարակութիւնը մօտ հինգ հազար բուրլ է ուղարկել յօգուտ սովելոց *)։ Ուրեմն բոլորովին անարդար կը լինէր կարծել թէ հիւսիսային Պալմիրայում բնակվող հայի սիրտը այնպէս անզգայ ու սառն է դէպի իր ազգութիւնը կամ ազգայինը, ինչպէս նորան շրջապատող սառուցները, ընդհակառակը, եթէ մի փոքր ծանօթանք այստեղի հայերի և մանաւանդ հայ ուսանողների հետ, այն ժամանակ ձեզ կը զարմացնէ մի երևոյթ. այն հայ երիտասարդը, որ առաջ Թիֆլիսում կամ մեր հայրենիքի մի ուրիշ քաղաքում ինք զինքը կոսմոպոլիտ էր համարում, ազգութեան պրինցիպը հերքում էր, մայրենի լեզուն սովորելը ժամանակի կորուստ էր համարում, այդ հայ երիտասարդը ընկնելով Պետերբուրգ, կարծես թէ վերածնվում է, նա սիրում է իր ազգը, հետաքրքրվում է նորա պիտոյքներով, սովորում է նորա լեզուն և այլն և այլն. մի խօսքով նա իրան պարծանք է համարում իր հայութիւնը։ Չեմ համարձակվի ասել, որ բացառութիւն չէ լինում, բայց բացառութիւնը իր սակաւութեամբ ընդհանուր կանոնի ընթացքը չէ փոխում. բացառութիւնը գլխաւորապէս լինում է հարուստների մէջ, որոնց թիւը բարեբախտաբար չնչին է այստեղի

*) Ձեզ յայտնի է, որ դեռ սկզբումը պ. Մ. Սանասարեանցը իր կողմից ուղարկել էր հազար հինգ հարիւր ր., այժմ լսում ենք հաստատ աղբիւրից, որ տեղւոյս բարեպաշտ հային մէկը, որի անունը իրաւունք չունենք կոչելու, նոյնպէս ուղարկել է սովատանջների համար հազար բուրլի։

տնից բացակայ էր։ Եղբայրը մոռացաւ եղբօրը։ Տների կարասիքը և ծանրութիւնները կամ մնացին իրանց տեղերում, կամ տէրերը կրակ տուեցին և այրեցին։ Մայրերը չալակեցին փոքրիկներին, իսկ հայրերը, բեռնաւորված մի քանի անհրաժեշտ իրեղէններով, բռնեցին իրանց որդիներին ձեռքից և դուրս եկան։ Խիստ սակաւ ընտանիքներ սայլեր ունէին, որովհետև սայլերը տարել էին պատերազմական մթերքներ տեղափոխելու։ Սպասելու ժամանակ չը կար, որովհետև թշնամին ետևից հալածում էր։ Ով մնաց, զոհվեցաւ բարբարոսի անգթութեանը։ Ով եկաւ, կարծեց, թէ ազատվեցաւ։ Բայց այստեղ ևս հանդիպեցան նոր դժբաղդութիւնների, որ աւելի սնոտորմ են քան թէ քուրդը և թուրքը,—ինչպէս են քաղցածութիւնը և հիւանդութիւնը։

—Եւ այդ հիւանդութիւնը հետևանք էր այն դառն չարչարանքների, որ կրեց ժողովուրդը իր գաղթականութեան ժամանակ։ Ամբողջ չաբաթների ճանապարհը նա պիտի անցնէր մի քանի օրվայ մէջ, առանց հանգստանալու և առանց մի տեղ կանգ առնելու։ Կին, աղջիկ, երեխայ, ծեր և մանուկ, բոլորը գալիս էին ոտով. խիստ սակաւները գրաստ ունէին։ Շատերը նուաղեցան, թուլացան և մնացին կէս ճանապարհի վրա։ Ո՞վ էր ուշադրութիւն դարձնում ազգականի, բարեկամի, մինչև անգամ սիրելի զաւակի վրա։ Ամենին տիրել էր մի ընդհանուր խառվութիւն. ամեն մարդ կորցրել էր թէ սիրտը և թէ զգացմունքը։ Աւելացրէք դրանց վրա քաղցը, ծարաւը և օտար երկրի անսովոր կլիման, և դուք հիւանդութիւնը շատ բնական կը գտնէք։ Թշնամուն չը հանդիպելու համար մեզ բերեցին այնպիսի սատանայական և լեռնային ճանապարհներով, որ շատ դժուար էր կնիկների և երեխաների համար անցկենալ։ Եւ այդ էր պատճառը, որ մի քառորդ մասը գաղթականների մնացին ճանապարհների վրա և բոլորովին ոչնչացան։ Կարճ ասած, Շահ-Ապասի Սպահան տարած հայ գերիների պատմութիւնը, որը այնքան սարսափելի գոյներով նկարագրում են մեր մատենագրները, այս գաղթականութեան հետ համեմատելով, մի շատ հասարակ դէպք պէտք է համարել։

Հայր սուրբի ցաւալի պատմութեան ժամանակ Վարդանի միտքը զբաղված էր բոլորովին այլ առարկայով. նա համարեա չէր լսում նրան.— նա մտածում էր իր սիրելի Լալայի մասին։ Ախար նա էլ այդ գաղթականների մէջ պէտք է լինէր, նա էլ պէտք է ենթարկված լինէր նոյն աղէտներին։ Թէև Ջաւոն պատմել էր նրան, թէ քուրդ բէկի կնոջ Խուրշիդի կարգադրութեամբ Լալան տարվեցաւ ռուսաց երկիրը, բայց նրա ծառաները խօ չէին կարող անցնել ռուսաց սահմանից, որովհետև իրանք քուրդ էին և թշնամի պետութեան հպատակ։ Ուրեմն, Լալային իր եղբօր կնոջ Սառայի հետ պէտք է թողած լինէին գաղթականների խմբի մէջ։ Բայց ինչպէս գտնել նրանց, արդեօք կենդանի են,—այդ հարցերը ըսկսեցին տանջել անբախտ երիտասարդին։

—Հայր սուրբ, դու ոչինչ չը գիտես ծերունի Խաչօի ընտանիքի մասին, հարցրեց նա,—իմ կարծիքով, նրանք ևս պէտք է գաղթականների մէջ լինեն, որտեղ կարելի է գտնել նրանց։

—Գտնել փոքր ինչ դժուար է ձեզ համար, որովհետև գաղթականները զանազան տեղերում ցրված են։ Բայց նրանց հետ եկել են իրանց քահանաները և տանուտէրները, ես յանձնել եմ այս վերջիններին կազմել իրանց ժողովրդի անուանական վիճակագրութիւնը, թէ որքան թիւով որտեղ են բնակվում, որպէս զի, նրանց դարմանելու համար հոգածութիւն լինի։ Այդ ցուցակներից հեշտ կը լինի գտնել, թէ գաղթականների որ խումբի մէջն է գտնվում ծերունի Խաչօի ընտանիքը։

—Ե՞րբ կը բերեն ցուցակները։

—Գուցէ վաղը, կամ միւս օրը, ճիշտը չը գիտեմ։

Այդ «վաղը» կամ «միւս օրը» մի անսահմանութիւն էր խեղճ Վարդանի համար, այս պատճառով նա այն գիշերը անցկացրեց անտանելի տանջանքների մէջ։

(Կը շարունակվի)

զուն, չորրորդը, քուրդերի մէջ ապրելով, մշակել է քուրդ լեզուի քերականութիւնը և այլն....

Եկող հնագիտական ժողովում, հայերը, եթէ կամենային, կարող էին եւրոպական գիտնականների համար ամենալաւ միջնորդներ դառնալ ոչ թէ միայն իրանց սեփական, ազգային հնութիւնները ու լեզուն ուսումնասիրելու համար, բայց և կարող էին միջոց տալ Կովկասի, Ընդրկովկասի, Հայաստանի և Փոքր-Ասիայի բոլոր միւս ազգութիւնների հնութիւնները, լեզուն և աւանդութիւնները ամենաճիշդ կերպով ուսումնասիրելու։

Հայերը, եթէ կամենային, կարող էին եկող հնագիտական ժողովում բոլոր տեղական ազգութիւններից ամենաառաջին դեր խաղալ, կարող էին իրանց հմտութիւններով և աշխատութիւններով նսեմացնել բոլոր միւս ասիական ազգութիւնները, նոյն իսկ այդ ազգութիւններին ահագին ծառայութիւններ մատուցանելով։

Բայց դժբաղդաբար, հայերը երբէք չը գիտեն շահվել իրանց դիրքից, իրանց ամենագովելի արժանաւորութիւններից։

Գ. Ա.

ուսանողութեան մէջ։ Բայց միթէ սիրելի ընթերցողն յայտնի չէ, որ մեր հարուստները և միլիոնչիկները միշտ և հանապազ բացառութիւն են առնում ամեն ազգային խնդրի մէջ. հեռու ուր գնանք, վերցնենք ամեն մէկուս աչքին խփող մի փաստ. արդեօք կարելի է կարդալ «Մշակ» կամ «Մեղու Հայաստանի» լրագիրների մի թերթ, որտեղ չը լինեն տասնաւոր և հարիւրաւոր նուիրատուների անուններ, արդեօք մնաց մի հայ քաղաք, մի հայ գիւղ, մի հայ խրճիթ անգամ, որտեղ լսելի չը լինէին թշուառ սովատանջների հեծկլտանքն ու աղիողորմ «հայրիկ հաց տուր մեզ, հաց» սրտաճմլիկ ձայնը և օգնութեան ձեռք չը հասցնէին։ Բայց մեր երևելի հարուստների ու միլիոնչիկների անունները մենք ի զուր էինք փնտռում նուիրատուների ցուցակների մէջ. ոչ մի տեղ չը պատահեցանք նրանց. ինչ եղրակացութեան պէտք է գալ ուրեմն։ Ես երկու բան կարող եմ ենթադրել. կամ մեր պ. պ. հարուստները թէպէտ և առատ նուիրատուութիւններ են արել՝ բայց իրանց անունները գաղտնի են պահում աւետարանի խօսքը ճշդութեամբ կատարելով (դը ժուար հաւատալի է, որովհետև ամենուն յայտնի է, որ եթէ հայ հարուստը մէկ ռուբլու բարեգործութիւն անէ, հինգ ռուբլու զուրնայ փչել կը տայ որ ուրիշներն իմանան), կամ թէ այդ պարոնները իրանց փողերն ու հարստութիւնները երկաթի արկղների մէջ պահելով՝ նոյնպէս իրանց սրտերը, խղճմտանքն ու ամեն բարի զգացմունքները (եթէ միայն ունեն) փակել են մի անմատչելի, գուցէ երկաթից աւելի ամուր պահարանի մէջ, որուն չը կարողանան հասնել ոչ ազգի թշուառութեան ծովի ալիքները և ոչ մահուան դէմ մաքառող սովատանջ հարազատ եղբարց ճիչն ու աղաղակը։

Անկասկած է, որ այդ պարոնները ամենայն ուրախութեամբ կը բանային իրանց հարստութեան արկղները, եթէ սովը վնէր տաճիկների կամ քրդերի մէջ, որովհետև իրանց առատաձեռնութեան փոխարէն նոքա կը ստանային սուլթանից մէճիդիէ կամ մի ուրիշ չքանչան, իսկ խեղճ հային օգնելով ումից պէտք է նոքա շնորհակալութիւն ստանան, խեղճ հայից, բայց հայի դարդակ շնորհակալութիւնը կոպէկ չարժէ. նորան չէ կարելի կուրծքին կախել, կարելի է միայն սրտումը պահել, իսկ հարուստ և միլիոնչիկ հայը սիրտ չունի։ Ը՛է, տարաբաղդ հայ, յոյս մի դնիր քո հարուստ եղբայրների վրա, նորա միլիոնները հաց ու ջուր չեն տայ. քո հաց ու ջուր տուողը, քեզ հկտ իր վերջին պատառը բաժանողը էլի մշակ հայն է։

Գ. Մելիք-Բէգլարեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք Թիֆլիսաբնակ հետեւեալ անձինքներից 6 ռուբլ յօգուտ Վասպուրականի սովատանջների։ Տիկին Նատալիա Խանդամիրեան, Նինա Դոլուխանեան, Սարգիս Գասպարեան և Անյայտ՝ իւրաքանչիւրը 1 ռուբլ, Ա. Վարդապետեանց 2 ռ., ընդամենը 6 ռուբլ։

—

Կիրակի, մայիսի 18-ին հայ սիրողները կրկին ներկայացումն տուեցին Արծրունու թատրոնում։ Խաղացին կրկին «Հաշտարար դատաւորի մօտ» կոմէդիա, «Ցնայնի օջախ» վոդէվիլը և պ. Տէր-Գրիգորեանց կարդաց մի քանի պատկերներ ժողովրդական կեանքից։ Մեզանում դա առաջին փորձ էր ժողովրդական կեանքից պատկերներ պատմելու. այն ինչ վրացիները վաղուց է արդէն մտցրած էին իրանց բեմը ժողովրդական կեանքից վերցրած պատկերների պատմելը։

—

Այսօր ռուս սիրողները կը տան Արծրունու թատրոնում յօգուտ Կովկասի սովածների մի ներկայացումն։ Կը խաղան «Maiорша» կոմէդիան և «Передъ Свадьбой» վոդէվիլ-օպերէտ։ Տեղերի գինը սովորական է։

—

«Մշակի» № 81 մէջ տպելով նուիրատուների ցուցակը, որով մեզ ուղարկված էր 1005 ռ. յօգուտ Վանի սովատանջների և որ ստորագրված էր Անուշ Յովհաննիսեան Ղուկասեանի անունով, սխալմամբ տպեցինք «Նամակ Բագուից», այն ինչ պէտք է լինէր «Նամակ Շուշուց», որովհետև այդ փողերը Շուշուց են ուղարկված մեզ։

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը։ «Հայ երիտասարդ մը որ Կ. Պոլսոյ երեսելի ազգային վարչութեանց մէջ ուսում առած է և լաւ վկայագրեր ունի, կը փափաքի թէ՝ ազգային վարժարանաց և տանց մէջ դասախօսել հայերէն, ֆրանսերէն, իտալերէն, թրքերէն լեզուներ և մաթեմատիքի ուսումն։ Կամեցողք կրնան տեղեկութիւն ստանալ «Մշակի» խմբագրատնէն։»

—

Կիրակի, մայիսի 25-ին հայ թատրոնասէրները Արծրունու թատրոնում կը ներկայացնեն՝ I առաջին անգամ «Փոզէֆ, փարիզի տղայ», կոմ. 2 արար. թարգ. Յ. Տէր-Գրիգորեանի, II առաջին անգամ «Երեք ապտակներ», վոդէվիլ I արար., թարգ. Յ. Տէր-Գրիգորեանի։ Կոմէդիայի և վոդէվիլի անտրակտում պ. Տէր-Գրիգորեան կը պատմէ «պատկերներ ժողովրդական կեանքից։ Տեղերի գները սովորականից ցածր են։

—

Շաբաթ օր, մայիսի 24-ին յայտնի երաժիշտ Բաուէր տալու է Արծրունու թատրոնում մի կոնցէրտ, մասնակցութեամբ պ. Գրիգորովսկու։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԹԻՒՐՔԻԱ

—

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը Կ. Պոլսից։

Լորդ Բիկոնսֆիլդի պատերազմական մինիստրութիւնը ընկաւ։ Այդ անկման բնական հետեւանքը այն էր, որ պ. Լայարդ յետ կանչեցաւ Կ. Պոլսից և նրա տեղ նշանակվեցաւ պ. Դօշեն։ Թէպէտ անգլիական նոր մինիստրները խոստանում են, որ մի քանի հարցերի վերաբերութեամբ նրանք կը շարունակեն նախկին մինիստրութեան քաղաքականութիւնը, բայց կասկածելի է, որ այդ խոստումնքը կատարվի։ Նոր մինիստրութեան հիմնական սկզբունքները բոլորովին ուրիշ են և այդ պատճառով նրա քաղաքականութիւնը, մանաւանդ Արևելքի վերաբերութեամբ, պէտք է արմատականապէս զանազանվի նախկին մինիստրութեան քաղաքականութիւնից և բոլորովին հակառակ ուղղութիւն ունենայ։

Անգլիական նոր կառավարութեան առաջին մինիստր պ. Գլադստոն, երբ Բիկոնսֆիլդից առաջ առաջնորդում էր անգլիական ազատամիտ մինիստրութեանը, ասիական գործերի վերաբերութեամբ Ռուսաստանի հետ կարողացաւ այնպիսի համաձայնութիւն կայացնել, որ համապատասխանում էր երկու պետութիւնների և քաղաքակրթութեան շահերին։ Ներկայումս այդպիսի համաձայնութիւնը անհրաժեշտ է, ի նկատի ունենալով Միջին Ասիայի, չինական սահմանների և Թիւրքական Ասիայի մէջ տիրապետող գործերի դրութիւնը։ Նախկին մինիստրութիւնը իր քաղաքականութեամբ սուլթանի երկիրները այնպիսի դրութեան էր հասցրել, որ Կովկասին սահմանակից Հայաստանի և Քիւրդիստանի մէջ կարող էին նոյնանման տնկարգութիւններ պատահել, որոնք պատահեցին Բալկանեան թերակղզու վրա։ Այդպիսի անկարգութիւնների առաջն առնելու համար Ռուսաստանը և Անգլիան պէտք է միաբանութեամբ աշխատեն և ստիպեն Թիւրքաց կառավարութեանը, որ նա բարեկամաբար ասիական Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութեան վիճակը։ Երկու պետութիւնները, Անգլիան և Ռուսաստանը, Փոքր-Ասիայում պէտք է հող պատրաստեն խաղաղ զարգացման համար և ոչ թէ այդ երկիրը ահագին պատերազմի ասպարէզ շինեն, ինչպէս վարվում էր լորդ Բիկոնսֆիլդի մինիստրութիւնը։ Որպէս զի կարողանանք ցոյց տալ, թէ անգլիական ընկած մինիստրութիւնը ինչպիսի յամառութեամբ պատրաստվում էր Ռուսաստանի հետ պատերազմելու համար, մենք կարճառօտ կը թուենք անգլիական դիպլոմատիայի զինուորական գործունէութիւնը ասիական Թիւրքիայի վերաբերութեամբ։ Այդ գործունէութեան պտուղները արդէն երևում են և նոր մինիստրութիւնը պէտք է նրանց դէմ միջոցներ գործ դնէ, եթէ ոչ հազիւ թէ Ռուսաստանի հետ կարելի լինի խաղաղ համաձայնութիւն կայացնել և հանգստացնել վրդովված Արևելքը։

Յայտնի է, որ Բիկոնսֆիլդի մինիստրութիւնը Սան-Ստեֆանոյի դաշնագիրը ստորագրելուց մինչև իր անկումը ձգտում էր ասիական Թիւրքիայի մէջ Ռուսաստանին թշնամի մի տարր ստեղծել։ Անգլիական դիպլոմատիան այնպէս էր գործում, որ մի նոր պատերազմ էր սպասվում Թիւրքիայի և Ռուսաստանի մէջ. պատերազմներ շուտ շուտ չեն լինում և եղածներն էլ յանկարծ չեն սկսվում։ Անգլիական դիպլոմատիայի գործունէութիւնը կարելի էր այնպէս մեկնել, որ նա ցանկանում էր այդ պատերազմը շտապեցնել, բացի այդ Բիկոնսֆիլդ այնպիսի ձեռնարկութիւններ էր կամենում սկսել, որոնք, եթէ իրագործվէին, տեղիք կը տային մի նոր պատերազմի։ Խաղաղութեան և քաղաքակրթութեան ընդհանուր շահերը ի նկատի ունենալով, ցանկալի կը լինէր, որ պատերազմի բոլոր առիթները ոչնչանային, այսինքն Արևելքի քրիստոնեայ բնակիչների վիճակը բարելավվէր։ Սուլթանի սեփականութիւնը պահպանելու համար դա ամենալաւ միջոցն է։ Եթէ գործին այդպէս վերաբերվեն, Ռուսաստանը ստիպված չի լինի նոր պատերազմ սկսել, իսկ Անգլիան Թիւրքիայից զանազան նահանգներ չի խլի Թիւրքաց կայսերութեան ամբողջութիւնը պաշտպանելու պատրուակով։ Կիպրոսի ձեռք բերելը, Թիւրքիայի և Ռուսաստանի մէջ մի նոր պատերազմ ի նկատի ունենալով, այդ ուղղութեան գործունէութեան սկիզբն էր։ Այդպիսի մի քանի գործեր դիպլոմատիան բացարձակ ինքն էր սկսում, իսկ միւսները յանձնում էր մասնաւոր անձանց, կամ ընկերութիւններին։ Այս վերջինների գործունէութենից երևում էր, որ դիպլոմատիան գաղտնի կերպով նրանց առաջնորդում էր։ Կը յիշենք այդպիսի գործերից մի քանի գլխաւորները. 1) Ամենից առաջ անգլիական նաւատորմի պահելը Մարմարեան ծովի մէջ ռուսաց զօրքերի Կ. Պոլսից հեռանալուց յետոյ, 2) Սկսված բանակցութիւնները նաւատորմի համար Սև ծովի վրա կայարաններ և Ալէքսանդրետա նաւահանգիստը ձեռք բերելու համար, 3) Անգլիական գործակատարների աշխատանքները ասիական Թիւրքիայի մէջ, որոնց նպատակն էր Ռուսաստանին համակրող ազգութիւններին թշնամացնել այդ պետութեան հետ, 4) Հայաստանի և Քիւրդիստանի մէջ մեծ բանակութեամբ զինուորական հիւպատոսների նշանակելը, 5) Ժանդարմերիայի անգլիական օֆիցերների ձեռքը դցելը, 6) Ռուսաստանի սահմանակից նահանգների բարձր վարչութիւնը անգլիացի գիներալներին յանձնելը, 7) Երկաթուղիների կառուցանելը բացառապէս անգլիական շահերի համեմատ, 8) Մախսուսէ ընկերութեան շոգենաւերի ձեռք բերելու փորձերը, 9) Բէյյիսի և Երեգլիի ձեռք բերելու փորձերը, որոնց մտադրված էր ընդարձակ նաւահանգիստներ դարձնել առևտրական պահեստներով։

Այդ ձեռնարկութիւնների մեծ մասը չաջողվեցան մասամբ Ռուսաստանի ճնշման ազդեցութեան տակ և մասամբ մերժվեցան Թիւրքաց կառավարութենից, որովհետև նա չէր ստանում դրամական օգնութիւն, իսկ այդ ձեռնարկութիւնների հետեւանքները ապագայում պէտք է երևային, այդ պատճառով Թիւրքաց կառավարութիւնը զիջումն չարաւ անգլիական դիպլոմատիայի ճնշմանը։ Չը նայելով դրան անգլիական նախկին մինիստրութիւնը աւելի եռանդով և յամառութեամբ շարունակում էր իր գործունէութիւնը։

Վերև յիշված ձեռնարկութիւնները կարօտ են բացատրութիւնների և մենք կը տանք այդ բացատրութիւնները։

Ամենից առաջ խօսենք զինուորական նաւատորմի մասին։ Անգլիական նաւատորմի Մարմարեան ծովի մէջ, սուլթանի մայրաքաղաքի մօտ մնալը մեկնվում էր ռուսաց զօրքերի ներկայութեամբ, որոնք սպառնում էին Կ. Պոլսին։ Մի և նոյն ժամանակ նաւատորմի ներկայութիւնը անգլիական դիպլոմատիային միջոց էր տալիս ընդդիմադրել ռուսաց դիտաւորութիւններին և իր դիտաւորութիւնները աջողեցնել։ Թիւրքերը, անգլիացիներին Մարմարեան ծովը թողնելուց յետոյ, նկատեցին, որ նրանք եկել էին ոչ թէ Թիւրքերին ազատելու, այլ իրանց գործերը կատարելու համար, բայց արդէն ուշ էր և նրանք ստիպված էին համբերել։ Նաւատորմի ներկայութիւնը Լայարդին մեծ ազդեցութիւն տուեց Կ. Պոլսում կատարվող գործերի վրա։ Նաւատորմի վրա հիմնվելով, անգլիական դեսպանը կարողանում էր ամեն բան անել, բացի այդ անգլիացի օֆիցերները լաւ ծանօթացան Մարմարեան ծովի, Դարդանելի ամրոցների և Փոքր-Ասիայի այն տեղերի հետ, որոնք Դարդանելեան նեղուցին մօտ են։ Նրանք կարողացան ուսումնասիրել Սօսկոֆիա գետը, որ, եթէ Ռուսաստանի հետ պատերազմ լինի, կարող է նշանաւոր դեր խաղալ։ Այդ գետը մի կողմից կարող է պաշտպանողական գիծ կազմել, միւս կողմից կարող է Սև ծովը դուրս գնալու ճանապարհ լինել։ Այդ բոլորը հետախուզվեցաւ, երբ անգլիական նաւատորմը Իզմիդի և Իշխանների կղզիների մօտ էր կանգնած։ Արտակի մօտ կանգնած ժամանակ նոյնանման հետախուզութիւններ կատարվեցան Տրօյադայի վերաբերութեամբ։ Թէպէտ անգլիական նաւատորմը երկար ժամանակ մնաց Մարմարեան ծովի մէջ, բայց նրան չաջողվեցաւ կատարել բոլորը, ինչ որ նախագծված էր և մի և նոյն ժամանակ նաւատորմը պէտք է հեռանար և նա հեռացաւ։ Անգլիայի դեսպանի ազդեցութիւնը խիստ փոքրացաւ և այդ փոփոխութիւնը այնչափ ակներև էր, որ Լայարդ ցանկացաւ վերադարձնել նաւատորմը, բայց արդէն ուշ էր։ Մի կողմից Թիւրքերը Դարդանելի մէջ այդ քայլի դէմ միջոցներ գործ դրին, միւս կողմից եւրոպական դիպլոմատիան հակակրութեամբ վերաբերվեցաւ այդ մտադրութեանը։

(Կը շարունակվի)

# «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մայիսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է։ Վարշավկի գիներալ-նահանգապետ Կօցեբու, իր խնդիրքի համեմատ տարութեան պատճառով արձակված է պաշտօնից։ Նրա տեղ նշանակված է Ալբեդինսկի, Ալբեդինսկու տեղ Տօտլեբեն, Տօտլեբենի տեղ Դրենտելն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 26 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 228 ռ., երկրորդ 220 ռ. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ. 62 կ., երկրորդ 90 ռ. 50 կ., երրորդ 90 ռ. 75 կ., ոսկի 7 ռ. 73 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25½ պէնս, ռուսաց 100 ռ. Գերմանիայի վրա 128 մարկ 37 պֆ., Համբուրգի վրա 217 մարկ 25 պֆ., Փարիզի վրա արժէ 268 ֆր. 75 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ արդէն դուրս եկան մամուլի տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԲԻՋԵՐ-ՍՏՕՈՒ. ԹՈՎՄԱՍ ԵՂԲՕՐ ՏՆԱԿԸ, հոխ. երեխաների համար Պալմէր, Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի: Պատկերազարդ և կազմած—60 կ.:

№ 5 ՄՈՐԵՆ ԵՒ ՆՈՐԱՆ ԶՆՋԵԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ. աշխ. Տէր-Բարսեղեանցի: Գինն է 10 կոպէկ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հեռաւեալ հասցէով Въ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

---

Աղէքսանդր Իվանիչ ՄԱՆԹԱՇՈՎ, ցաւելով յայտնում է իր մայր ԹԱՎԱԼ Դաւիթօվնա ՄԱՆԹԱՇՈՎԻ ՄԱՀՈՒԱՆ մասին և խնդրում է ծանօթներին և բարեկամներին յարգել ՀԱՆԴՈՒՅՑԱԼԻ յիշատակը, ներկայ գտնվելով յուղարկաւորութեան հանդիսին, ուրբաթ, մայիսի 23-ին, առաւօտեան 10 ժամին: Հանգուցեալին իր ՍԵՓԱԿԱՆ ՏԱՆԻՑ, որ գտնվում է ՆԱԳՕՐՆԱՅԱ փողոցի վրա, տանելու են ՄՈՂՆԻՆԻ եկեղեցին:

1—2

---

# ԾԱԽՎՈՒՄ Է ՄԵԲԷԼ ԹԻՖԼԻՍՈՒՄ, ՆԱԳՕՐՆԱՅԱ ՓՈՂՈՑՈՒՄ, ՏՈՒՆ № 21, ԴԱՀԻԹՈՒՄ:

1—2

---

Մամուլի տակից դուրս եկաւ դօկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

---

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է «Կենտրոնական» և պ. Զ. Գրիգորեանցի «Կովկասեան» գրավաճառանոցներում և Թարգմանչի մօտ Ներսիսեան դպրոցում՝ համաշխարհական ողբերգակ Վիլիամ Շէկսպիրի՝

Օտէլլո

Վենետիկի մաւր, ողբերգութիւն հինգ արարուածով Շէկսպիրի կենսագրութեամբ: III Թարգ. Ստեփանոսի Սուլթանեանց. գինն է 60 կոպ.:

1—5

---

## ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վենէրական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վենէրական և բողազի հ., Էյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկովսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վենէրական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վենէրական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստուածատուրով վենէրական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վենէրական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

---

«ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ, ԵՒ ԸՆԿ.»

Առևտրական տունը սրանով յայտնում է, որ դնումներին մինչև նոր փոփոխութիւնը վըճարում է.

| | |
|---|---|
| 1) Հասարակ և պայմանաւոր ընթացող հաշիւներին | 4½% |
| մինչև պահանջելը | 4½% |
| 2) Ժամանակաւոր մուտքերին. 6 ամսով | 6% |
| 9 ամսով | 6½% |
| 1 տարով | 7½% |
| 1½ տարով | 8% |
| 2 տարով և աւելի | 8½% |
| 3) Մասնաւոր դնումներին առաջին կարգի պայ ունեցողներին | 9% |
| Գումարներ տալու ժամանակ վերցնում է Մի ամսվայ ընթացքում | 10% |
| « շաբաթվայ | 9% |

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ տան ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գտնվում է իշ. ԹՈՒՄԱՆՕՎՆԵՐԻ տանը, Աղէքսանդրեան այգու դիմացը և բաց է մուտքեր ընդունելու և վերցրած պարտքերի հանգցնելու համար ՀԱՍԱՐԱԿ օրերը առաւօտեան 8—2 ժամը, իսկ ՏՕՆԵՐԻՆ առաւօտեան 8—10 ժամը:

2—3 (2)

---

ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎԻ ԵՒ ԸՆԿ.
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

## ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Յայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսակները յետադարձութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկար ժամանակամիջոցում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտորայի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակներ: Գրասենեակը գտնվում է Աղէքսանդրեան այգու հանդէպ, Թումանովի տանը:

10—10

---

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՎՍԷՍԵԱՆ
ԲԷՀԲՈՒԹԵԱՆՑ

Որ հայոց փողոցում ամաններ է ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նամակ է ուղարկել քաքաքային փոստայով, յայտնել իրան թէ ինչ հասցէով պէտք է ուղարկել պատասխանը, որովհետև նամակները ստորագրված չեն և նրանց վրա նշանակված չէ հասցէն:

Յովհաննէս Մ. ԲԷՀԲՈՒԹԵԱՆ

---

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների տարեկան հարցաքննութիւնները կըսկսուին մայիսի 15-ին և կը շարունակուին մինչև ամսի վերջը, հետևեալ կարգով:

Մայիսի 15 և 16-ին Կուկիու Թանդոյեան օրիորդական ուսումնարանում.
« 17 — Կուկիու Ս. Աստուածածին եկեղեցու ուսումն.
« 19 և 20 Կաթողիկէ Ս. Դէորգ եկեղ. ուսումն.
« 22 — Հալաբարի Ս. Մինաս եկեղ. Իզմիրեան ուսումն.
« 23 — Զուղուրէթի և Ս. Կարապետ եկեղ. ուսումն.
« 24 — Զորաբաշի և Շամքոռեցոց եկեղ. ուսումն.
« 27 և 28 Հալաբարի Մարիամեան օրիորդ. ուսումն.
« 30 և 31 Զգրաշէնի ուսումնարաններում:

Թեմ. վեր. Գ. Բարխուդարեանց

---

Երկու Ֆրանսիացի ՕՐԻՈՐԴՆԵՐ ցանկանում են ընդունել իրանց մօտ երեխաներին դասեր տալու համար, առաւօտեան ժամի 9-ից մինչև ժամի 1-ը: ԴԱՍԵՐԸ կը լինեն Ֆրանսերէն, գերմաներէն լեզուներից և մուզիկայից:

Հասցէն՝ Սօլօլակի, տուն Օրբելի: № 14.

3—3 (1

---

Շաբաթ՝ մայիսի 24-ին, «ԱՇԽԱՏԱՆՔ» լրագրի խմբագիրը ռուս լեզուով հրապարակական դասախօսութիւն կանի ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԻ մասին: Կարդալու տեղը, ինչպէս նաև դասախօսութեան բովանդակութեան մանրամասնութիւնները ամենակարճ միջոցում կը յայտնվեն տպագրապէս: Տոմսակներն առաջուց առնել կարելի է Կենտրոնական զրավաճառանոցում, Զաքարիայ Գրիգորեանի, Վարդանեանի և Շահ-Ազիզեանի զրավաճառանոցներում:

2—3

---

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ օրիորդաց ուսումնարանում ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ լինելու են ՀԵՏԵՒԵԱԼ ԿԱՐԳՈՎ.

Մայիսի 19 և 20 կրօն և Սրբազան պատմութիւն.
« 22 և 23 հայոց լեզու.
« 26 և 27 ռուսաց լեզու.
« 28 թուաբանութիւն
« 30 և 31 Աշխարհագրութիւն, պատմութիւն և բնական գիտութիւններ:

1—5

---

Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատներում և դրոգիստների մոտ. Գլխաւոր դէպօ նիւթի հնարող Ֆարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջ գտնվում, Վարշավայում, Էլէկտորալնի փողոց, № 35: Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է զգուշանալ խարդախումներից:

8—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ(1)

---

Вышелъ изъ печати и поступилъ въ продажу VI томъ **„Сборника свѣдѣній о Кавказѣ“**, изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:

**«Тифлисъ по однодневной переписи 25-го марта 1876 г.»**

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложеніями, а именно:

1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;

2) 2 вида Тифлиса: по Шардену (1671 г.) и Турнефору (1701 г.);

3) копія съ плана Тифлиса по царевичу Вахушту (1739 г.);

4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Беренштама, Кавказской книжной торговлѣ и Центральной книжной торговлѣ. Цѣна **4 руб. сер.**; на пересылку прилагается за 5 фунт.

---

*1880*

## ԹԱՏՐԱԿԱՆ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ ՀԱՅ ԹԱՏՐՕՆԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

## ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ

I

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

## ԺՕԶԷՖ, ՓԱՐԻԶԻ ՏՂԱՅ

Կոմեդիա 2 արար., Թարգ. Ց. Տէր-Գրիգորեանի

Անցքը պատահում է ՓԱՐԻԶՈՒՄ

II

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

## ԵՐԵՔ ԱՊՏԱԿՆԵՐ

Վոդեվիլ I արար., Թարգ. Ց. Տէր-Գրիգորեանի

Կոմեդիայի և վոդեվիլի անտրակտում պ. Ց. Տէր-Գրիգորեան կը պատմէ

«ՊԱՏԿԵՐՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ:»

ՏԵՂԵՐԻ ԳՆԵՐԸ ՍՈՎՈՐԱԿԱՆԻՑ ՑԱԾՐ ԵՆ:

Տոմսակները թէ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ օրը և թէ վաղօրք կարելի է ստանալ ԱՐԾՐՈՒՆՈՒ թատրոնի կասսայում, ԱՄԵՆԱՑՆ օր առաւօտեան 10—2 և երեկոյեան 6—8 ժամը:

Дозволено Цензурою 21 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона